

գտնուում է 2000 վերստ հեռաւորութեամբ Կաշկալի և խոկապէս Զինաստանի միջև։ Կաշկալում Պելլեօն յայտնադործեց մի տաճար բազմաթիւ ձեռագործներով, որոնք միաժամանակ արտայայտում էին յունական գեղաբուեստը և հնդկական երևակայութիւնը։ Դուզգուր-Ակուրում նա գտաւ այրուած շինութեան աւերակների տակ հարուստ մատենադարանի հետքեր։ Վերջապէս անապատի ամենածայրին Տուան-Խուան-Եմու նա ներս մտաւ մի գաղտնի նկուղ, ուր 12 դարերի ընթացքում հանգստանում էր մատենադարան, որ բոլոր ասիական լեզուներով ձեռագրեր է բովանդակում։

Թարգմ. Յ. Ա. Ե.



ՏԵՂԵԿԱԾՈՒՅՈՒՆ

Տօնվելան շաբաթ.-Յունիսի 6-ից սկսուիցին Ա. Հոխվովիմեանց և Դայիանեանց կոյսերի տօները։ Մայիս Աթոռիս միաբանութիւնը սովորակեան համեմատ նախատօնակին ու ո. պատարագին նեկայ եղաւ վանքերում։ Այս տարի տեղայուղ անձրեների պատճառով ժողովուրդը սակաւ էր։ Ամսիս 11-ին և 12-ին շաբաթ և կիուակէ, «Ա. Լուսաւորչի ելն ի վիրապեն» և «Ասթուղիկէ Ա. Էջմիածնի» տօներին հանդիսաւոր ժամերգութիւն և ո. պատարագ մատուցուեցին Մայիս Տաճարում։ Արաւարագիշներն էին-շաբաթօրը՝ Մագիստրոս Տ. Մեորոպ Եպիսկոպոս, իսկ կիւրակէօրը՝ Ատթուղիկոսական Տեղակալ Տ. Գէորգ արքեպիսկոպոսը։ Կատարուեց մաղթանը Մայիս Աթոռի հաստատութեան համար, Կային քաւական ուխտաւորներ Երևանից և Հրանտայ տեղերից։

Դպրոցական նանապարհութիւն.-Յունիսի 8-ին եկան Մայիս Աթոռա նոր նախիջեանի թեմական դպրոցի Զ. Պասարանի աշակերտները թուով 24 հոդի իրանց երկու դաստիարակների հետ։ Դիտեցին Մայիս Աթոռի և շրջակայքի կարեռը հաստատութիւններն ու հնութիւնները և վեց օր հիւր մեալով Մայիս Աթոռում։ յունիսի 13-ին գնացին

շարունակելու իրանց գպրոցական ճանապարհորդութիւնը,

նույտ ձեմարտիբ մատենողարանին. Տրկին վարչապետ Բանանեանը, որ 30,000 ռուբլի էր նուիրել Մայր Աթոռի ձեմարանին կից մանկավարժական թանգարան կառուցանելու, Մոյիս ամսին գալով Մայր Աթոռոս և այցելելով ձեմարանը՝ մի հարիւր ռուբլի նուիրեց ձեմարանի մատենագարանին կարեւոր գրքեր գնելու համար.

Նույտ Մայր տաճարին -Հանդ. Աղեքոսանդր Մանեանի ժառանգները Ամեն. Տեղակալ որբազանի անունով Մայր տաճարին նուէր են ուղարկել մի ծանրադին գիպակ գիազարդ, որ Նորին Բարձր-Սրբազնութիւնը յանձնեց լուսարարապետ Տ. Ղեոնդ Կափուկոպոսին մուծելու Մայր տաճարի զարդերի և անօթների տումարի մէջ.

Հանգ. Աւետ. Բալ. Պուեսեանի քուտկառութիւն. Հանգուցեալ Աւետիք Բալայեան Ղուկասեանի աշխարհական թոշակաւորներ ընտրուեցին քարձրագոյն դրակուցներում ուսանելու համար պ. Մենեքերիմ Տէր Յակովիքեան և Յակովիք Յարութիւնեան, — երկուսն էլ ձեմարանի սաներից. առաջինն արդէն ուսանում էր Գերմանիայում, երկրորդը անցեալ տարի աւարտեց. Նա 19¹⁰ թուին ուսուցիչ էր Թաւրիդում և այս տարուանից պէտք է ոկսի ուսանել:

Տաճարի վերանորոգութիւն. Մայիսի վերջերին թիվսից Մայր Աթոռոս եկան Մայր Տաճարի վերաշինութեան յանձնաժողովի անգամ ճարտարապետներն ու նկարիչները, և տեղումը գիտելով ինչ որ հարկաւոր էր, եկան այն եղբակացութեան, որ առանց փոփոխութիւններ անելու տաճարի այժմեան կազմի մէջ, միմիայն ներքուստ և արտաքուստ նորոգելու ծրագիրը պէտք է կազմեն ու կարծ ժամանակում ներկայացնեն Մայր Աթոռի կենդրութեան յանձնաժողովին ընթացք տալու, որ վերահսկողութիւնը սկսուի եկող տարի.

Նոր Սարկաւագնիւր. Կաթուղիկոսական Տեղակալ Տ. Գէորգ Արքեպիսկոպոսի օրհնութեամբ յունիսի 4-ին, Ո.

Գայիշանէի վահքում Մազիստրոս Տ. Մեսրոպ Եպիսկոպոսը սարկաւագ ձեռնադրեց Մայր Աթոռիո նոր միաբան Արէլ Արքահամեանին և Ռուբէն Մանասեանին, որոնք և նշանակուեցին Տեղակալ Մրբաղանից Տպարանի վարչութեան անդամներ։

Ա. Էջմիածնի ձեմարանի Գ. լսարանի և Զ. դաստանի ընթացաւարտներ. Այս տարի Մայր Աթոռի Հոգեոր ձեմարանում աւարտուկան քննութիւնները սկըսուեցին ապրիլի 20-ին և տեսյին մինչև յունիսի սկիզբը։

Լուսրանական եռամեայ դասրնթացն աւարտեցին հետևեալ հինգ ուսանողները. 1) Այլմողեան Հմաեալ Կարնեցի, 2) Յովհաննիսեան Ալէքսան Առակցի (վերաբնակ Պարսկաստան), 3) Վարդապետեան Վահան, Էվջիլարցի (Ուրմալուի դաւառ.), 4) Տեր-Յարութիւնեան Առհակ, Կոթի գիւղացի (Ղաղտխի դաւառ.) և 5) Տիրացուեան Արտաշէս, Շումլացի (Բուլլարիա)։ 4 հոգի էլ մնում են առաջիկայ աշնան սկզբին վերաբննութիւն տալու, Գ. լսարանի ըովու ուսանողները ներկայացրել են աւարտական շաբարութիւններ։

Դպրանոցական Զ. դասարանի լիակատար դասրնթացքն աւարտեցին հետևեալ աշակերտները.

- 1) Բաղիլ Յովհաննէս, Թեհրանցի. 2) Բաղդասարեան Երեմիա, Գորիսեցի. 3) Գաբրիէլեան Գաբրեգին, Փարալեցի. 4) Գուլյեան Արքահամ, Սալմաստեցի. 5) Դանիէլեան Աշոտ, Շուշեցի. 6) Գաբրինեան Արշաւիր, Վանեցի 7) Երկարակեցեան Միսակ, Բաղէցի. 8) Թաթուլեան Կարապետ, Անուխեցի (Առխումի շրջ.). 9) Ղարիբեան Զարեհ, Թեհրանցի. 10) Մահտեսի-Դրիգորեան Ռափայէլ, Սալմաստեցի. 11) Մահտեսի-Մարտիրոսեան Գէորգ., Գէշշելուեցի (Էջմիածնի դաւառ.). 12) Մառանջեան Մեսրոպ, Ալէքսանդրապոլցի. 13) Մարտիրոսեան Մեսրոպ, Խլաթցի. 14) Մելիք-Բաբայեան Արշակ, Բաշքեանդցի (Դարալագեալի դաւառ.) 15) Պարթևեան Խոսրով, Վանեցի, 16) Մարգսեան Հրանտ, Սամաղացի. 17) Արմէօնեան Մկրտիչ,

Աղքանդրապոլիսի. 18) Տէր-Աւագեան Անուշաւան, կո-
ռափինցի. (Դարավագեազի գ.), 19) Տէր-Իորայէլեան
Արիստակէս, Համզաշեղցի (Տարօնի թեմ). 20) Տէր-Յա-
կոբեան Պաղինակ, Թաւրիղեցի. և 21) Քոչարեան Ստե-
փան, Վաղարշապատցի. Յ հոգի էլ վերաքննելի են առա-
ջիկայ ուսման տարուայ սկզբին.

Աւարտող լսարանցիները յունիսի 5-ին, կիրակի օրը,
ո. պատարագից յետոյ Ամենապատիւ Տ. Տեղակալի, վան-
քի միաբանութեան, ճեմարանի ուսուցիչների և հասա-
րակութեան ներկայութեամբ հոգեհանգիստ կատարեցին
ճեմարանի Հիմնադրի՝ երջանկայիշատակ Գէօրդ Դ. կա-
թողիկոսի գերեզմանի վրայ. ուսանողներից մէկը, Գառ-
նիկ Շահինեան, իւր և իւր բնկերների կողմից երախտա-
գիտական զգացմունքով մի ճառ արտասանեց՝ նուիրած
հանգույեալ Հիմնադրի յիշտակին և նրա կառուցած
կրթական տաճարին, խոստոնալով կեանքի մէջ ծառայել
հայ ժողովուդի մտաւոր և բարոյական վերածնութեան։

Եիրվանգաղէի յոբելեանը.—Անցեալ մայիսի 22-ին
Թիվլիսում մեծ հանդիսաւորութեամբ տօնուեց հոյ վի-
պագիր և թատերագիր ալ. Աղքանդր Շիրվանզագէի
գրական դործունէութեան երեսնամեակը. Բոլոր լրադր-
ները լի էին յօրելիարի մասին տեղեկութիւններով և
յօրելինական տօնի նկարագուութիւններով. «Արարատը
դեռ անցեալ տարի ալ. Շիրվանզագէի վէպերի մասին
տպել էր մի վերլուծութիւն»։

Ի սրտեցանկանում ենք ալ. Շիրվանզագէին առօղջու-
թիւն և հոգւոյ ոնդորութիւն՝ իւր բեղմնաւոր գրչով
հարատացնելու մեր աղքատիկ գրականութիւնը։



Յայտնի բանաստեղծ, մանկավարժ և հրապարա-
կախոս ծերունի Ղաղարոս Աղայեանցը յունիսի 20-ին
յանկարծամահ եղաւ։